

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՆՁՆՎԱԾ (ԱՄՐԱՑՎԱԾ), ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏ-ՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՊԵՏԱԿԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ (ՎԱՃԱՌՔԻ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական կառավարման համակարգի մարմինների (այսուհետ՝ պետական մարմին) տիրապետմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված), պետական ոչ առևտրային կազմակերպություններին (այսուհետ՝ կազմակերպություն), պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին (այսուհետ՝ ընկերություն) և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքը (այսուհետ՝ պետական գույք) հրապարակային սակարկություններով (մրցույթ կամ աճուրդ (սակ էլեկտրոնային) կամ ուղղակի եղանակով օտարելու (վաճառելու) (այսուհետ՝ վաճառք) հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգը չի տարածվում «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված գույքի վաճառքի հետ կապված հարաբերությունների վրա:

3. Պետական գույքի վաճառքն իրականացվում է աճուրդով (այդ թվում՝ էլեկտրոնային) կամ մրցույթով, կամ ուղղակի վաճառքի եղանակով՝ սույն կարգին համապատասխան ընդունված իրավական ակտի հիման վրա, ընդ որում՝

1) պետական գույքը վաճառվում է ուղղակի եղանակով գործարար (ներդրումային) ծրագիր ներկայացրած, նախօրոք հայտնի գնորդին և տվյալ գույքի վարձակալին, եթե գույքի վաճառքի մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ.

2) հրապարակային սակարկություններով վաճառքի ներկայացնելիս՝

ա. ընտրվում է մրցույթով վաճառքի եղանակը, եթե գնորդը գույքի սեփականության իրավունքը ձեռք բերելու հետ մեկտեղ գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով գործարար ծրագրին համապատասխան պետք է ստանձնի որոշակի պարտավորություններ,

բ. ընտրվում է աճուրդով վաճառքի եղանակը, եթե գնորդից չի պահանջվում կատարել որևէ պարտավորություն:

4. Շարժական, ինչպես նաև պետական անշարժ գույքի վերանորոգման և ապամոնտաժման արդյունքում պիտանի համարվող գույքի վաճառքից ստացված դրամական միջոցները փոխանցվում են համապատասխան բյուջեներ՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված կարգով, եթե վաճառքի մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

5. Պետական մարմնի, կազմակերպության, ընկերության կամ հիմնադրամի լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից սահմանված կարգով:

2. ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

6. Վաճառքի ենթակա պետական գույքի գնահատումն իրականացվում է շուկայական գնահատմամբ՝ «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի N 209 որոշմամբ սահմանված կարգով՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից՝ իր կանոնադրությամբ սահմանված գործառույթների շրջանակներում կամ որակավորում ունեցող անկախ գնահատողի կողմից:

7. Պետական գույքի գնահատման համար պետական մարմնի, կազմակերպության, ընկերության կամ հիմնադրամի կողմից Կոմիտե են ներկայացվում հետևյալ ելակետային փաստաթղթերը՝

1) անշարժ գույքի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրվող անշարժ գույքի, ինչպես նաև դրա զբաղեցրած, օգտագործման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի տարածագնահատման գոտիականության գործակցի, հողամասի 1 քառ. մետրի կադաստրային արժեքի վերաբերյալ տեղեկանքը,

անշարժ գույքի գրադեցրած հողատարածքը Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված չլինելու վերաբերյալ համապատասխան համայնքի կողմից տրված տեղեկանքը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենը.

2) շարժական գույքի դեպքում՝ անվանումը, գույքի տեսակը, արտադրման տարեթիվը, տեղեկանք՝ տեխնիկական վիճակի վերաբերյալ, ինչպես նաև՝ առկայության դեպքում՝ տեխնիկական անձնագրի պատճենը, իսկ տրանսպորտային միջոցի դեպքում՝ տեխնիկական անձնագրի պատճենը, տեղեկանք՝ տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի վերաբերյալ, գրություն կամ տեղեկանք՝ տրանսպորտային միջոցը գրավի կամ արգելանքի առարկա չհանդիսանալու մասին:

3. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

8. Պետական մարմիններին ամրացված, կազմակերպություններին, ընկերություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված հողամասերի ու շինությունների տարածագնահատման գոտիականության 1-ին, 2-րդ և 3-րդ գոտիներում գտնվող՝ յուրաքանչյուր միավոր 10 մլն դրամից ավելի գնահատված արժեքով անշարժ գույքի, նույն որոշմամբ հաստատված, հողամասերի ու շինությունների տարածագնահատման գոտիականության 4-19-րդ գոտիներում գտնվող՝ յուրաքանչյուր միավոր 50 մլն դրամից ավելի գնահատված արժեքով անշարժ գույքի, յուրաքանչյուր միավոր 50 մլն դրամից ավելի գնահատված արժեքով շարժական, ինչպես նաև 30 մլն դրամից ավելի գնահատված արժեքով պետական անշարժ և շարժական գույքի վերանորոգման ու ապամոնտաժման արդյունքում պիտանի համարվող գույքի վաճառքի մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի ներկայացմամբ:

9. Պետական մարմիններին ամրացված, կազմակերպություններին, ընկերություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված

պետական սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված հողամասերի ու շինությունների տարածագնահատման գոտիականության 1-ին, 2-րդ և 3-րդ գոտիներում գտնվող՝ յուրաքանչյուր միավոր մինչև 10 մլն դրամ գնահատված արժեքով անշարժ գույքի, նույն որոշմամբ հաստատված, հողամասերի ու շինությունների տարածագնահատման գոտիականության 4-19-րդ գոտիներում գտնվող՝ յուրաքանչյուր միավոր մինչև 50 մլն դրամ գնահատված արժեքով անշարժ գույքի, յուրաքանչյուր միավոր մինչև 50 մլն դրամ գնահատված արժեքով շարժական, ինչպես նաև 30 մլն դրամ գնահատված արժեքով պետական անշարժ և շարժական գույքի վերանորոգման ու ապամոնտաժման արդյունքում պիտանի համարվող գույքի վաճառքի մասին որոշումն ընդունվում է պետական գույքի կառավարման մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) ղեկավարի հրամանով, կազմակերպություններին, ընկերություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի դեպքում՝ կազմակերպության, ընկերության և հիմնադրամի վերադաս պետական մարմնի համաձայնությամբ, բացառությամբ եթե՝

1) տվյալ գույքը փաստացի չի օգտագործվում.

2) օգտագործվում է կանոնադրական գործառույթներին ոչ համապատասխան.

3) լիազոր մարմնի կողմից անշարժ գույքի օգտագործման վիճակի մշտադիտարկման (մոնիթորինգի) ուսումնասիրման արդյունքում առաջարկվել է ներկայացնել վաճառքի:

10. Սույն կարգի 8-րդ և 9-րդ կետերում նշված իրավական ակտերը պետք է ներառեն տեղեկություններ՝

1) գույքի գնահատման տարեթվի և ամսաթվի մասին.

2) վաճառքի ձևի, վաճառքի գնի, այդ թվում՝ որպես գույքի մեկ միավոր կամ որպես գույքի առանձին տարրեր վաճառելու մասին.

3) գույքն աճուրդով (կամ մրցույթով) վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ չվաճառվելու դեպքում հաջորդ աճուրդի (աճուրդների) կամ մրցույթի (մրցույթների) կազմակերպման նպատակահարմարության և յուրաքանչյուր հաջորդ աճուրդի (կամ մրցույթի) ժամանակ մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի իջեցման չափի մասին (որը կարող է նվազեցվել վերջին կազմակերպված աճուրդի (կամ մրցույթի) մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի մինչև 20 տոկոս).

4) գույքն ուղղակի վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ գնորդի անունը կամ անվանումը, վաճառքի գնի, վճարման կարգի, վճարման ժամկետների և գործարար (ներդրումային) ծրագրի առկայության մասին:

5) այլ տվյալների մասին:

11. Սույն կարգի 8-րդ և 9-րդ կետերում նշված դեպքերում գույքի վաճառքի նպատակով աճուրդը և մրցույթը կազմակերպում ու անցկացնում է լիազոր մարմինը՝ սույն որոշման 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված կարգերով:

13. Գույքն ուղղակի եղանակով վաճառքի ներկայացվելու դեպքում գույքի (բացառությամբ հողամասի) վաճառքի գինը սահմանվում է սույն կարգի 6-րդ կետով սահմանված կարգով, գնահատված արժեքը կարող է լինել 75 տոկոսի չափից ոչ պակաս, եթե գույքի վաճառքի մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

14. Գույքն աճուրդով կամ մրցույթով վաճառքի ներկայացվելու դեպքում գույքի (բացառությամբ հողամասի) առաջին աճուրդով վաճառքի մեկնարկային կամ առաջին մրցույթով վաճառքի նվազագույն գինը սահմանվում է սույն կարգի 6-րդ կետով սահմանված կարգով, գնահատված արժեքը կարող է լինել 75 տոկոսի չափից ոչ պակաս, եթե գույքի վաճառքի մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

15. Աճուրդով (մրցույթով) չվաճառված գույքի մեկնարկային (վաճառքի նվազագույն) գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի (մրցույթի) ժամանակ (եթե այդպիսին նախատեսվում է գույքի վաճառքի մասին իրավական ակտով) նվազեցվում է վերջին աճուրդի (մրցույթի) մեկնարկային գնի մինչև 20 տոկոսի չափով, եթե գույքի վաճառքի մասին իրավական ակտով ավելի փոքր չափ չի սահմանվել:

17. Գույքի աճուրդով (կամ մրցույթով) վաճառքի մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 15 օրվա ընթացքում լիազոր մարմինն իր պաշտոնական և www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքերում հրապարակում է գույքի աճուրդով (կամ մրցույթով) վաճառքի մասին հայտարարությունը, ընդ որում, աճուրդն անցկացվում է հայտարարության հրապարակմանը հաջորդող 15-րդ օրվանից, իսկ մրցույթը՝ 30-րդ օրվանից ոչ շուտ:

18. Պետական մարմիններին ամրացված՝ վաճառքի ենթակա յուրաքանչյուր միավոր՝ մինչև տաս մլն դրամ գնահատված արժեքով, շարժական գույքի օտարման մասին հրամանն ուժի մեջ մտնելուց հետո, շահագործման համար պիտանի շարժական

գույքը (տրանսպորտային միջոցները) սույն կարգի պահանջների համապատասխան վաճառքն ամբողջությամբ կազմակերպելու (գնահատում, աճուրդի կազմակերպում) և իրականացնելու համար տեղափոխվում է լիազոր մարմնի կողմից նախատեսված տարածք՝ գույքի պահառությունը կազմակերպելու նպատակով: Ընդ որում, սահմանված կարգով չօտարվելու դեպքում շարժական գույքը վերադարձվում է համապատասխան պետական մարմնին: Իսկ այն տրանսպորտային միջոցները, որոնք շահագործման համար ոչ պիտանի և ենթակա են տեղափոխման հատուկ միջոցների՝ քարշակի օգտագործմամբ, դրանց պահառությունն իրականացնում է գույքն օգտագործող պետական մարմինը՝ սույն որոշման պահանջներին համապատասխան՝ մինչև գույքի վաճառքի գործընթացի ավարտը:

19. Աճուրդին (մրցույթին) մասնակցելու համար մասնակցի կողմից վճարվում է՝

1) նախավճար՝ մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի 5 տոկոսի չափով, որը հաղթող մասնակցի համար համարվում է գույքի վաճառքի գնի մաս, չի վերադարձվում և փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, եթե հաղթող մասնակիցը հրաժարվում է հետագա վճարումները կատարելուց, իսկ չհաղթող մասնակցին (մասնակիցներին)՝ վերադարձվում է աճուրդի (մրցույթի) կայացման օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ իրենց կողմից ներկայացված հաշվեհամարին:

2) մասնակցության վճար, որը գույքի գնի մեջ չի ներառվում, անկախ աճուրդի (մրցույթի) արդյունքներից՝ չի վերադարձվում և օգտագործվում է աճուրդի (մրցույթի) կազմակերպման նպատակով:

20. Գույքը չվաճառվելու դեպքում այն ներկայացվում է նոր աճուրդի (մրցույթի), եթե գույքի վաճառքի մասին իրավական ակտով նոր աճուրդի կազմակերպումն արգելված չէ, որի ժամանակ գույքի մեկնարկային (վաճառքի նվազագույն) գինը նվազում է գույքի վաճառքի մասին իրավական ակտով հրապարակված և (կամ) գույքի աճուրդով (մրցույթով) վաճառքի մասին հայտարարությամբ սահմանված չափով, իսկ այդպիսի չափ սահմանված չլինելու դեպքում՝ վերջին աճուրդի (մրցույթի) մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի մինչև 20 տոկոսի չափով:

21. Սույն կարգի 17-րդ կետով սահմանված ժամկետում գույքն աճուրդով կամ մրցույթով չվաճառվելու դեպքում, մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի N 209 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով սահմանված ժամկետը լրանալը, գույքի հավանական գնորդները կարող են դիմել լիազոր

մարմին՝ տվյալ գույքը վաճառելու մասին իրավական ակտի համաձայն կազմակերպված վերջին աճուրդի կամ մրցույթի համար սահմանված պայմաններով գույքը ձեռք բերելու համար: Ընդ որում, մրցույթի համար ներդրումային պայմաններ սահմանված լինելու դեպքում գնորդը, գործարար (ներդրումային) ծրագրից բացի, պետք է ներկայացնի ներդրումների վերաբերյալ հստակ հիմնավորված թվային առաջարկություն: Հավանական գնորդը պետք է ներկայացնի՝

1) իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման վկայականի պատճենը, պետական գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը, կանոնադրությունը, անհրաժեշտության դեպքում՝ նաև գույք ձեռք բերելու մասին ընկերության ընդհանուր ժողովի որոշումը:

2) ֆիզիկական անձանց համար՝ նույնականացման քարտի պատճենը կամ անձնագրի պատճենը՝ հաշվառման էջով:

3) գործարար (ներդրումային) ծրագիր (մրցույթի դեպքում):

4) գրավոր առաջարկություն՝ գույքը ձեռք բերելու վերաբերյալ:

22. Լիազոր մարմինը, սույն կարգի 21-րդ կետում նշված պայմաններով գույքի վաճառքի վերաբերյալ հայտարարությունն իր պաշտոնական կայքում տեղադրելուց հետո, եթե ստացել է մեկ դիմում, իսկ մրցույթի դեպքում՝ նաև գործարար (ներդրումային) ծրագիր, ապա դիմումն ստանալուց հետո 7-րդ աշխատանքային օրը կայացնում է որոշում այն ընդունելու կամ մերժելու մասին, և, որոշում կայացնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է հավանական գնորդին: Ընդ որում, դիմումն ընդունելու դեպքում՝ հավանական գնորդին ներկայացնում է ուղղակի ձևով գույքը վաճառելու վերաբերյալ գրավոր առաջարկություն:

23. Եթե սույն կարգի 22-րդ կետով նախատեսված դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում նույն գույքի գնման համար ստացվել են մեկից ավելի դիմումներ, ապա լիազոր մարմինը սույն որոշման 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված կարգերով կազմակերպում է տվյալ գույքի աճուրդը կամ մրցույթը:

24. Դիմումատուի կողմից սույն կարգի 21-րդ կետով նախատեսված փաստաթղթերը թերություններով ներկայացվելու դեպքում լիազոր մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան գրությամբ դրա մասին տեղեկացնում է դիմումատուին, որը գրությունն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է շտկի փաստաթղթերում առկա թերությունները:

25. Սույն կարգի 22-րդ և 23-րդ կետերի համաձայն ներկայացված դիմումը մերժվում է, եթե՝

1) չեն ներկայացվել սույն կարգի 21-րդ կետով նախատեսված փաստաթղթերը.

2) սույն կարգի 24-րդ կետով սահմանված ժամկետում չեն շտկվել ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները:

26. Սույն կարգի 25-րդ կետով նախատեսված հիմքերով դիմումների մերժման դեպքում գործընթացը շարունակվում է սույն կարգի 21-25-րդ կետերով սահմանված պայմաններով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ